



# ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՀՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՍԵՊՏ. 1906. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԱՊԱՐԴԻՒՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Պարսկաստանէն յետոյ այժմ Չինաստան ալ կը պատճրաստուի սահմանադրութիւն մը ունենալ, ինչպէս կը ծանուցանէ Բէքինէն եկած հետ. զիր մը Ասիկա առիթ մը չէ՞ արդեօք վերջիչելու մեր հինգամեայ սահմանադրական պայքարը և հարցում մը ուղղելու, օղին մէջ, թէ ինչ եղաւ Գաւառական Երեսփոխանական Ժողովը և թէ ինչ է կայսրթեան բուն վիճակը:

Անցածները լուր մը առինք այս մասին, օղին մէջէն լուր մը, որ սակայն նոյնիսկ թերթի մը մէջ ալ տպագրուած երեւաւ: Այդ լուրը հետունքէն՝ Եւրոպայէն՝ կուգար և կը ծանուցանէր թէ Վսեմ. Պօղոս փաշա նուպար փողոցը Արթին պէյ Բէիզեանի հանդիպելով կեցած և Ալեքսանդրիոյ Երեսփոխանական Ժողովի խնդիրը գոհացուցիչ կերպով կարգադրած ու յետոյ «մնաս բարեաւ» բնելով առած քալած էր:

Այս լուրը սահմանադրական շրջանակներու մէջ մեծ ուրախութեամբ ընդունուեցաւ, սրտաբեկները նոր յոյսով մը ամրապնդեց և զօրացուց ու մեր նորընտիր երեսփոխաններուն նոր հոգի, նոր կեանք պարզեցր:

Եւ սա՛խյն ինչ է այդ գոհացուցիչ կարգաշքութիւնը. ահա ինչ որ մութ կը մնայ:

Յուսալի է որ փողոցին մէջ տեղի ունեցած այդ պատմական խօսակցութիւնը միայն հայ պատահական անցորդ մը կիսկատար լսած է և նամակով հաղորդած հոս բարեկամի մը:

Այսպէս ուրեմն Վսեմ. Պօղոս փաշայի և Արթին պէյ Քէրզեանի միջև անցած խօսակցութեան լիակատար արդիւնքը պիտի իմանանք միայն երբ Արթին պէյ իր զբօսական պտոյտը բաւ համարելէ ետքը վերադառնայ Ալեքսանդրիա: Մաղթելի է սակայն որ մինչև այն ատեն, կրկին փողոցին մէջ չհանդիպի Պօղոս փաշային և նոր խօսակցութեան մը բռնուի հետը, որուն արդիւնքը բոլորովին տարբեր ըլլայ այն խօսակցութեանէն որուն լուրը այնքա՛ն խանդավառ կերպով ողջունուեցաւ սահմանադրութեան սիրահարներուն կողմէ:

Ամէն պարագային՝ քիչ մը տխուր չէ՞ մտածել թէ հինգամեայ պայքարէ մը ետքը, անբողջ ձեռք բերուած յաջողութիւնները քանի մը ժամուան մէջ ոչնչացան և այժմ ստիպուած ենք Սահմանադրութեան գործադրութեանը համար մեր բոլոր յոյսը դրնել անորոշ ու տարտամ խօսակցութեան մը վրայ:

Եւ ս՛կ իրերու և իրողութեանց հեզնութիւն, մենք սահմանադրականքս, ժողովուրդի իրաւունքներուն պաշտպաններս, ակնդէտ ու պաղատագին կը սպասենք որ փաշա մը և պէյ մը բարեհաճին «գոհացուցիչ կարգադրութիւն մը» ընել և բանի մը նմանցնել նորընտիր Երեսփոխանական Ժողովը:

Չինաստանի ու Պարսկաստանի Շնորհքեաններն ու Տամատեանները արդեօք ինչ պիտի մտածեն իրենց

նգիպտական կրօնաբաններուն մասին, կրք շատ մը  
քաներու հետ, իմանան նաև խօսակցութեան պատ-  
մութիւնը:

Բայց նոյնիսկ այդ Պօղոս փաշա-Արթին պէյ խօ-  
սակցութենէն ծնած կարգադրութիւնն ալ անդառնա-  
լիօրէն դատապարտուած է ջուրը իյնալու, ինչպէս  
անկէ առաջ ջուրը ինկան բոլոր սահմանադրական  
կարգադրութիւնները:

Ենթացրենք որ ամբողջ մը եկան խօսակցութեան  
երկու ներսները և ձամբու յոգնութենէն հանգստա-  
նալէ ետքը, առտու մը յիշեցին իրենց խօսակցութիւ-  
նը և Արթին պէյ ըսաւ. «Երթամ ու կարգադրեմ Ե-  
րեսփօխանական ժողովին խնդիրը»:

Հրախրազիրներ ուղղուելոյն երեսփոխաններուն  
որպէսզի հաճին այսինչ օր՝ այսինչ ժամուն գալ Ա-  
ռաջնորդարան: Գուցէ հաւիրազիրներուն տակ սա ձե-  
յևտ գրութիւն մըն ալ աւելցուի. «Կը խնդրուի պատ-  
երեսփոխաններէն որ բարեհաճին իրենց կերակուրը  
ծրարով մը միասին բերել, որպէսզի եթէ խորհրդակ-  
ցութիւնը երկարի Աղքատախնամի պիւտճէն վնաս  
չկրէ »:

Արդ, անոն այսինչ օր՝ այսինչ ժամը հասած է: Ե-  
րեսփօխանները յաղթական կը մտնեն Առաջնորդա-  
րանի դռնէն ներս ու կ'ուղղուին մեծ սրահը ուր  
թիկնաթոռներ շարուած են իրենց համար: Կը բազ-  
մին ու քիչ ետքը Արթին պէյ ներս կը մտնէ ու  
կ'անցնի նախագահական սեղանին առջև:

- Պարոննե՛ր, կ'ըսէ, կամ գուցէ՝ էֆէնտիներ, այս  
ամառ Եւրոպա ջուրերը գացած էի, առտու մը երբ  
փողոցէն կ'անցնէի տեսայ որ վսեմ Պօղոս փաշան  
կուգար միւս կողմէն, մօտեցայ նորին վսեմութեան

և որպիսութիւնը հարցուցի. - «Շնորհակալ եմ,» ըսաւ. «Դուն ինչպէ՞ս ես,» հարցուց. - «Ես ալ աղէկ եմ, հանքային ջուրերէն բաւական օգտուեցայ: - Մարսողութիւնդ լաւ է. - Շատ լաւ, հիմակ ամէն բան կրնամ կրնամ կոր ուսել առանց ստամոքս խանգարելու, ձեր աղիքներու անհանգստութիւնը ինչպէ՞ս եղաւ. - Ես ալ բաւական օգտուեցայ. - Ի՞նչ կայ չի կայ նոյնը. - Նորութիւն մը չի կայ. - Եզիպտոսէն լուր մը կ'առնես. - Այո, ամէն շաբթու նամակ կը ստանամ. - Բամպակները այս տարի լաւ են կարծեմ. - Այնպէս կ'երևայ... վերջապէս, տեարք երեսփոխանը, շերկարեմ բաւական տեսակցեցանք նորին վսեմութեան հետ և այդ միջոցին առիթ ունեցայ խօսք բանալու ձեր մասին: Նորին վսեմութիւնը այդ օր լաւ արամազրութեան մէջ էր:

- Բան մը ընելու է այդ խեղճերուն համար, ըսաւ:

- Ինչպէս որ կը հրամայէք, պատասխանելի  
Լեսոր վրայ վսեմ. փաշան ինձ կարգ մը հրահանգներ տուաւ դորս պարտք կը զգամ ձեզի հաղորդել:

Նախ՝ Երեսփոխանական ժողովին ատենապետը այսինչը պիտի ըլլայ, իսկ փոխ ատենապետն ալ այսինչը. ատենապփրը այսինչը իսկ փոխ ատենապփրը այսինչը. Քաղաքական ժողով մը պիտի ընտրէք, ըստ Սահմանադրութեան, որուն անդամները պիտի ըլլան այսինչ և այսինչ անձերը. Քաղաքական ժողովի ատենապետ պիտի ընտրէք այսինչը, իսկ ատենապփր՝ այսինչը, վսեմ փաշան մասնաւորապէս յանձնարարած է որ այսինչ և այսինչ անձերը որ և է մասնակցութիւն չունենան ազգային պատճեններու և նոյնիսկ լիթէ քուէսով ընտրուած են՝ դուրս ձգուին ձեր մէջէն.

օ՞ն ուրեմն, տեսաք երեսփոխանք, հաճեցէք ընտրութիւնները կատարել, ըստ Սահմանադրութեան:

Անո՞ հաւանօրէն ինչ որ պիտի ըսէ Արթին պէյ Եւրոպայէն վերադարձին:

Այն ատեն քնականարար՝ տրամաբանօրէն, անխուսափելի կերպով Տ. Յ. Ենօրհջեան և Տ. Ս. Տամատեան սոք պիտի կլլան ու խօսք պիտի ուզեն և եւրօքն ալ, գրեթէ միևնոյն բռտերով, հետեակ արգարացի և օրինաւոր դիտողութիւնը պիտի ընեն.

- Ձեր առաջարկութիւնները չենք կրնար ընդունիլ որովհետև հակառակ են Սահմանադրութեան պէտքերն: Ժողովուրդը, օրինակի համար, իր ազատ քուէովը երեսփոխան ընտրած է Տ. Հայկ Էքիզէրը և կամ այնինչը, մենք չենք կրնար հիմակ այդ ընտրութիւնը բեկանել Վեպ. փաշային կամքով: Բայ ստորի Բաղաբախան Ժողովի և դիւանի ընտրութիւնը, ըստ օրինի պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ և առանց արտաքին ազդեցութեան և ճնշման և քուէարկութեան արգիւնքը պէտք է որ ընդունուի, ամէնուս կողմէ, առանց որ և է պատճառաբանութեան: Սահմանադրութիւնը այսպէս կը պահանջէ. այս են Օրէնք և Մարգարէք:

Այն ատեն Արթին պէյ սոք պիտի կլլայ, «Ուրեմն մնաք բարով, ձեզի հետ գործ չունիմ» պիտի ըսէ ու պիտի մեկնի, իրեն հետ սանելով քանի մը երեսփոխաններ:

Մնացողները շուարած իրարու երես պիտի նային, յետոյ մէջերնէն մէկը պիտի առաջարկէ Դիւանի և Բաղաբախան Ժողովի ընտրութեանց ձեռնարկել, առանց նկատողութեան առնելու Արթին պէյի յայտարարութիւնը:

Քուէարկութիւնը պիտի կատարուի, Տ. Հայկ Էքիզէր Երեսօրհանական Ժողովի ատենագեւս և Քաղաքական Ժողովի նախագահ պիտի ընտրուի. այնինչը որ այսինչին հետ անհաշտ հակառակօրոյ է, Քաղաքական Ժողովի մէջ ամոռակից պիտի ըլլայ և Ժողովը փակուելով Երեսօրհանները գոհ սրտով պով գուրս պիտի ելլեն սոսաջնորդարանէն:

Հետևեալ օր ութը տասը հրաժարական պիտի թափին զեր. սոսաջնորդին հօսոյէին. յաջորդ օրը Վրսեմ Պօղոս փաշա քուէարկութեան արդիւնքը պիտի իմանայ, պիտի բարկանայ և ամբողջ ընտրութիւնները չեղեալ պիտի հռչակէ: Վսեմ. փաշային որոշման վրայ ութը տասը հոգի ևս պիտի հրաժարին:

Եւ պիտի ըլլայ ինչ որ եղած է տարիներէ ի վեր, այսինքն՝ Սահմանադրութեան գործադրութիւն, քուէարկութիւն, ընտրութիւն ևն. օչին մէջ պիտի յընդին և հարկ պիտի ըլլայ նորէն այս բէն գիմէն սկըսիլ որպէսզի օրինական ընտրութիւն մը ընենք որ դարձեալ պիտի արժանանայ միւս օրինական ընտրութիւններու բախտին:

Եզրակացութիւն...

- Որչափ ատեն որ գոյութիւն ունենան Տ. Հայկ Էքիզէրի կամ այսինչ ու այնինչ անձի խնդիրները, Պօղոս փաշայի կամքը և սահմանադրականները, Երբէք Ալեքսանդրիա չպիտի կրնայ ունենալ օրինական ազգային մարմին մը:

Ահաւասիկ հնգամեայ փորձառութեան մեղի տըւած դասը:

Եւ սակայն կարելի չպիտի ըլլայ այդ ընդդիմամարտ տարրերը հաշտեցունելու միջոցը գտնել:

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԱՐԿԱՏՆԵԼՈՅ

Գուճար նախորդ ցուցակի դրշ. ողջ	51058
Նոր նուիրատուներ՝	
Տիգրան Սր լաղանեան	97, 50
Ոճն (Ա. Թ.)	195
Յակոբ Գ. Պոյաճեան	97, 50
Արշակ և Յակոբ Ժամկոչեան	97, 50
Գահիրէէն՝ Յակոբ Պագրճեան	97, 50
„ Ս. Օտապաշեան	104
Գէորգ Մետիկեան	100
Թաթուլ Պարոնեան	40
Զանազաններէ	185
Նոյն նախապակաւ նախապէս հանգա- նակուած փոմարի վր Մնացորդը որ աւանդ կը մնար Տօթ. Ժամկոչեանի մօտ, յիշեալէն գանձուած	276
ԶԱՆԱԶԻՆԻ ազգայինք	3125
ՄԱՆՍՈՒՐԱՅԻ „	774
Ա. Յ. Բապուճեան	100
Կօչիկ ներկող հայ ներկարարներէն	
հանգանակուած	160
Համագումար .....	56507

Ծանօթ.~ Զակագրիկէն և Մանսուրայէն ե-  
կած ցանկերը վերջէն պիտի հրատարակուին:  
Նախորդ ցուցակին մէջ երեցած „Օհաննէս  
Փափաղեան“ը պէտք է ըլլայ Յակոբ Փափաղեանի:

ՀԱՇԻԻ ՏԱԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ ՄԸ

Նեղացուօիչ հաշուետուութիւններէ ազատելու  
դիւրին միջոց մը գտած եմ զոր ազնուօրէն և ձրիա-  
բար կը հաղորդեմ սիրելի ընթերցողներուս՝ ի գոր-  
ծադրութիւնս:

Օրինակով մը բացատրեմ այդ միջոցը:

Անցած օր սենեակս նստած Ազատ Բեմի վերջին  
թիւերը կը կարդայի անյագ հետաքրքրութեամբ մը,  
կրք զուռը զարկին և դերձակս ներս մտաւ.

- Սա մեր հաշիւը երբ պիտի կարգադրես, ըսաւ  
հարցապնդիչ շեշտով մը:

(Անցողաբար ըսեմ որ 200 զրուշի չափ պարտք  
ուներմ իրենս)

- Պարոն, պատասխանեցի վեհ ու յանդիմանիչ  
ձևով մը, չեմ ամչնար, չեմ խպնիր, ամօթ չունիս:

- Ի՞նչ կայ որ, ըսաւ խեղճը շուարած:

- Չեմ գիտեր եղածը... մէջ մը անցեալդ փնտռէ.

- Բայց սա մեր հաշիւը, վեց ամիս է իս կը խաղ-  
ցընես կոր...

- Յիշէ 1874 թուականը-

- Աղբար սա իմ փարաներս տնւր երթամ...

- Խըրիմեան պատրիարքին օրովը դուն չէիր որ  
մայր եկեղեցիին մէջ չիչուի պողոսցիր...

- Ճանըմ սա իմ առնելիքս տուր, 200 զրուշ պարտ-  
քըդ վճարէ նախ և յետոյ...

- Գրիտոտառուր Ղազարոսեանին, Ստեփան ֆա-  
փագեանին հետ մէկ եղար ու մեր ամենուս սիրած,  
ամենէն պաշտուած Հայրիկին դէմ այնքա՞ն մեքենա-  
յութիւններ ըրիր...

- Պարապ խօսք մտիկ չեմ ըներ, սա մեր հաշիւը  
չուտով կարգադրէ:

- Լո՛ւ, ցնդած, ապուշ, թշուտասկան, լիտի, սին-  
զըքոր, սինիբ, սրիկայ:

Ու բարկածայթ ոտք ելլելով մարդուն օձիքէն  
բոնեցի ու օհնեակէն դուրս նետեցի:

Վերաշարձայ գրասեղանիս առջև և շարունակեցի  
Ազատ Բեմի վերջին թիւերը կարգալ անյագ հետա-  
յրբրութեամբ:

Կրկին դուռը դարկին և այս անգամ ներս մտաւ  
Կօչկակարս որուն երեք զոյգ կօչիկ կը պարտիմ, զոյ-  
գը վախժու՛ն զրուչէն:

- Սա 180 զրուշի հաշիւը կարգաչրէիր, ըսաւ ա-  
ռանց յառաջարանի:

- Ի՞նչ լուր անդիի աշխարհքէն, պատասխանեցի  
առանց ամենափոքր կարևորութիւն մը տալու իբ  
խօսքերուն:

- Ո՞ր անդիի աշխարհը:

- Դուն մեռած չես:

- Ե՞ս, ի՞նչ կ'ըսես ազբար, ոզջ առոզջ եմ, և ա-  
պացոյցն ալ ան է որ եկեր հաշիւ կը պահանջեմ  
բենէ:

- Չէ, պատասխանեցի կտրուկ ձայնով մը, կը սը-  
խալիս, դուն մեռած ես և ես չեմ կրնար մեռած մար-  
դու մը հաշիւ տալ:

- Խենթ խօսքեր մի՛ ընեք, սա 180 զրուշը վճա-  
րէ պոռաց մարդը բարկացած:

Իսկ ես կատարեալ պազարիւնով ոտք ելայ, ասիտ  
ֆէնիքի շիշ մը առի, կտոր մը բամպակ քիթիս ծակե-  
րուն թխմեցի և կօչկակարին քովը երթալով ասիտ  
ֆէնիքի շիշը վրան պարպեցի:

Մարդը սկսաւ պոռչտալ և ես իրեն բացատրեցի  
թէ ինք երկար առենէ ի վեր մեռած ըլլալով իր դի-

ալը փտութեան վիճակին հասած էր և թէ ապանե-  
խձաթի համար պարտաւորեա՞ծ էի չի՞լը վրան թափել:

Մարդը ապուշ ապուշ երեսս նայեցաւ, քիչ մը  
գլուխը օրօրեղուն նկայողնայ անշուշա՞ զիս խելագա-  
րած և նթադրելովք:

Բայց ինչ յաղթական վերնադարձայ գրասեղանիս  
տողնու չարունակեցի Ազատ Բեմի ընթերցումը, մը-  
տածելով թէ մարդ ոգտակար ընթերցողներով շա՞տ  
բանավը գործի որոնք կրնան գործնականապէս ծա-  
ռայել իրեն:

Գ Բ Ա Ք Է Տ

Հէլլանցի Տատուրին

Պը՛տու...

Ու երբ երեսդ նայի յանկարծ, կարծես քեզ պիտի  
լուծէ իր տազանդին ալեծուփ ջրտառութեանը մէջ:

Ան գիշերը բնաւ չէ քնացեր. հինգ անգամ աչքէ  
անցուցեր է «Հատընտիր Քաղուածք»ները և ութ ան-  
գամ ալ ձոյն շարթուան թերթերը, բան մը, ի սէ՛ր  
Աստուծոյ, բան մը գրելու համար...

Յս Թ. Բն. Բն. աղուոր նայէ Արփիարեանը, գրեր է,  
ստորագրութիւնն ալ Ա. Ա. դրեր է:

- Քէչիէ ես ըլլայի կ'ըսէ իւրապի ու, - կը խորհի  
յետոյ - կ'ի՞նչ ես ըլլայի գոնէ ծածկանունն մը կը դնէի  
որ սանկ ամենքը փնտաւկեն քի նով է... աս աղուոր  
բանը դրող:

Ան գիշերը հիւլաք եղեր է ալ աս յօդուածին  
վրայ զոր շարչրկուելով հագիւ կպցուցեր է թուղթին:  
Եւ հիմա ափին մէջ սեղմած դայն կը քալէ, կը քա-  
լէ... զէպի խմբադրատուն:

Ճամբուն, յանկարծ կանգ կ'առնէ ե գոհունակութեան անուն իւանդադասանքով մը կը բանայ ձեռագիրը անդամ մըն ալ քնքուշօրէն ե վրան նայելով կը ժպտի . .

Օ՛հ, գրագէտ, գրագէտ...

Խենթենալիք բան է:

Ամենքը պիտի հիանան վրան, որովհետեւ վերջապէս մարդը լաւ, բարի թելագրութիւններ ըրեր է ժողովուրդին:

Օրինակ: Գահիրէի լսարանին մէջ հարէմլիք-սէլամլիք շինել:

Ազգային իշխանութիւնը պէտք է նկատի առնէ:

Ամենքը պիտի վիճարանին իր վրայ:

Մտրդ պիտի ըլլայ: Ու մանաւանդ գրագէտ մարդ:

Օ՛հ, հեշտութիւն հեշտութեանդ...:

Հետեւեալ օրը, կանուխ, արշալոյսը ջնեսած, պատահանին առջե կը սպասէ թղթաբերին:

Հէ,- սա եկողը ան է: Հա, կուգայ կոր...

Չէ, ան չէ եղեր:

Ուրիշ մը. անոր կտտինը: Հա, հա, բութածին է:

Եւ ո՞վ երջանակութիւն:

Յօգուածը առաջին էջէն սկսեր են. երկրորդին մէջ վերջացեր է:

Ստորագրութիւնը Հապա. ստորագրութիւնն ալ չեն մոռցեր դնելու գրաշարները. ճիշտ իր ուղածին պէս: Աֆէրիս գրաշարներ: Աֆէրիս խմբագրապետ: Ի՞նչ ազէկ մարդիկ են:

Բայց վերջապէս,- կը շարունակէ մտածել - ես ալ նետուելիք գրող մը չեմ:

Արփիարեանը չկրցաւ հասկննել թէ յեղափոխու-

թիւեր մը ստակար է Հայտեթեան: Եւ, տայայն, Ար-  
փիտրեան չեմ ես ասանկ կ'ընեմ մարտը:

Ու նորէն կը նայի լրացիրին վրայ. եթէ քովին-  
ներէն չամչնայ, պիտի համբարէ թերթին ամէն մէկ  
կողմը. այն թերթին՝ որ, երեսկայեղէք սնդատ մը, իր  
յօղաւածը հրատարակած է, իր յօղաւածը...

Յօղաւածը պարունակող լրացիրը գրպանն է. գուրա  
կ'ելլայ, քիչ մը օդ տանելու:

Հետեւն կուգայ միւսիւնն ինչո՞նք, իր բարեկա-  
մը Արգիօք կարգացներ է: Արգիօք հաւենք է: Ու կը  
մտանայ:

- Բարե միւսիւնն ինչո՞նք կարգաբէք...

- Հա, այն:

- Շատ լաւ գրեր է մէկը կարանի մասին, չէ:

- Պարապ բաներ են հղբայր, սով է աս մարչը  
գիւ հայերէն չի գիտեր կոր...

Ի՞նչ կ'ըսես բարեկամ, կորովի գրիչ ունի... ու  
գրպանէն հանելով կը սկսի նորէն կարգալ յօղաւածը...

Գրպակէտ, գրպակէտ...

ՉԻԿՉԱԿ

ՅԱՌԻ

- Ահա՛ կին մը որ իր ամուսնոյն երկպատիկ  
ծաւալը ունի...

- Անոր կինը չէ ուրեմն այլ կ'ըլի ին՞ը:

Ինչպէս անուանելու է թուարանութիւնը  
այն տգէտ մարդոց որոնք մատերնուն վրայ մի-  
ոյն գիտեն համբել:

- Մտտէ՛ ատիկ...  
—

Մարդ ինչո՞ւ չի տեսներ թերութիւններն  
— յա մարդոց որոնց կը համակրի:

- Այնքան աչքդ կը մտնան սր ի վերջոյ...  
կը կաւրչնեն գրեզ:

- Ի՞նչ է կեանքը:

- Վայելիլ ու վայելիլ

Մէն Կէն

ԿՐԱԿ... ԿՍՅ ՇԱԲԱԹ ՕՐ

Նոր թեւթ մըն ալ, բայց քիչ մը տարբեր  
մինչև հիմակ երեցածներէն, լոյս պիտի տես-  
նայ սեպտեմբեր Ցին, շաբաթ օր: Թերթին ա-  
նունն է ԿՐԱԿ և խմբագիրները լրուանգ Օտ-  
եան և Բարսեղ Նահպոյց:

„Կրակ“ ինչպէս էր անունէն յայտնի է,  
ջերմ ընդունելութիւն մը գտնելու սահմանուած  
է: Ըսենք որ այս թերթը զուտ յեղափոխական  
է, առանց սակայն կուսակցական ըլլալու: „Կը-  
րակ“ բուն պայքար մը պիտի մղէ բոլոր բըռ-  
նակալութեանց, նախապաշարմանց, կեղծիքնե-  
րու և խաբէբայութեանց դէմ, որոնց վրայ, ա-  
ւա՛ղ, հիմնուած է արգի ընկերութիւնը:

Կը մաղթենք որ „Կրակ“ միշտ վառ մնայ  
և իր հրաշունչ բոցերովը տաքցնէ մեր անտար-

բերներուն, թուլամորթներուն. այլտոերածնե-  
րուն և յավերացածներուն սառուցեալ հոգիները  
 ,,Կրակի՛ առ այժմ բաժանորդագրութիւն  
 չբռն ը և միայն ձեռքէ պիտի վաճառուի հա-  
 տը մեկ գ.շ. ողջի:

**ՀԱՐՑՈՒՄ ՄԸ**

Ի՞նչու է որ Ազատ Բեմ թերթին խմբագրութեան  
 կողմէ ի նպաստ կովկասի արկածելոց բացուած հան-  
 դանակութեան արգիւնքը զրկուած է միակ արկածեալի  
 մը որ Կ. Պօլսէն Թրֆլիզ գացած և հոն հաստատուած  
 է և որուն խանութը վերջին հայ-թաթարական կոթե-  
 ներու տունն թալանի տրուած է: Եթէ իրաւ է, ին-  
 չու մինչև հիմակ Ազատ Բեմ չխոստովանիր ճշմար-  
 տութիւնը՝ բուժելու համար գայթակղեալ մտքերը և  
 եթէ իրաւ չէ, ի՞նչ է ճշմարտութիւնը: Կարծենք ա-  
 տենն է որ հանրութիւնը միանգամ ընդմիջա լուսա-  
 րանուի այս մասին:

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ**

Ա. Ս. Բ. Լ. Գահիրէ.~ Ստացանք ձեր նը-  
 ւերը 300 զրշ. ողջ, ի նպաստ Վալվարէզոյի երկ-  
 րաշարժէն արկածեալներուն, բայց որովհետև  
 Շիլի կառավարութիւնը յայտարարած է թէ  
 օտար երկիրներէ նուիրատուութիւն չընդունիր,  
 ուստի պարտք համարեցինք սոյն գումարը մեր  
 կողորդը անցունել որ այս օրերս պաղ առած  
 ըլլալով արկածեալ վիճակի մը մէջ կը գտնուէր:

# New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՍ

ՆՈՐ ՎԻՔԹՈՒՒՄ ՊԹԷԼ Ազերսանդրիոյ Մօտ  
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒՍԾ Հայր թիւ 2

Առաջին կարգի օթել, մասնաւորապէս շինուած,  
այժմու ըստը հանգստաւէտութեան պայմաններով:  
Հիւնալի ձաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր  
ձաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելքերը  
բոլոր լոյս ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հե-  
ռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամբլէ, Թոամվո-  
յով աստը վարկեան Ազերսանդրիայէն:

Ս. Յ. ՌԻՉԻԿ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօն-  
աններու և զինուորականներու համար: Բոլոր սեն-  
և ախնեք ծովուն վրայ կը նային:

Ս Ե Ծ Ա Յ Թ Ա Ս Ա Ն Ո Յ

ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒՍԾ

Գ. ՆԱՐԱՐԻՔԻՆԻ

15 RUE STAMBOUL 15

AT. EX. AMIRIUS

Այս աշխատանքը մեծ կը պահանջուի ԳԻՆ ԳԻՆ և կրկն ըստը հանգստաւէտութեան պայմաններով: Գրաստաններ, արտիկ և սալօն, ծխարան, ձաշարան, Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելքերը բոլոր լոյս ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամբլէ, Թոամվոյով աստը վարկեան Ազերսանդրիայէն:

Տարածուած ամեն տեսակ գրքեր նաև աստը Գրաստանով: Հարսանկար ըրախոյզները, սպասարաններ, շահագործողներ, աստը գրքեր, աստը ըրախոյզներ, իր կրկն արտիկները, գրքեր ևս: Մասնաւոր ըստը հանգստաւէտութեան պայմաններով:

Այս աշխատանքը շինուած կը շինուորները Ազերսանդրիոյ Գալիկի և ըստը հանգստաւէտութեան պայմաններով: Գրաստաններ, արտիկ և սալօն, ծխարան, ձաշարան, Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելքերը բոլոր լոյս ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամբլէ, Թոամվոյով աստը վարկեան Ազերսանդրիայէն:

Աստը գրքեր ևս: Գրաստաններ, արտիկ և սալօն, ծխարան, ձաշարան, Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելքերը բոլոր լոյս ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամբլէ, Թոամվոյով աստը վարկեան Ազերսանդրիայէն:

«ՍՉԱՏ ԽՕՍԿ» ՉԵՌԻԷ  
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ  
Ազերսանդրիա՝ Տ. Յ.  
Հագրիկեանի քով և Շէրիֆ  
Փաշա լրագրավաճառ Տ.  
Թելալեանի խանութը  
Գահիրէ՝ լրագրավաճառ  
Տ. Հունկի և Կոլոլըն Բէջ-  
քի քով և «Լուսարի»  
թերթի ցրուիչին մօտ:  
Նախորդ շարթուան  
թիւերը կը վաճառուին  
կրկին գինով:

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, ի Պայտանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲՍՔ ՕՐԵՐԸ

Եզրպսո սի համար բաժնեգրին է

40 թ. ԻԸ 40 ՂՐԾ. ՈՂԶ

20 ” ” 20 ” ”

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ 40 ՅԻՒ 10 ՅՐԱՆՔ

ՌՈՒՍԻ ” ” 4 ՐՈՒՊԼԻ

ԱՄԵՐԻԿԱ ” ” 2 ՏՈԼԱՐ

Բաժանորդագրութիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԾ. ՈՂԶ

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, ի համար բաժնեգրին կամ  
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-  
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, ( EGYPTE )

Շանուցումներ կրնդունուին մասնաւոր  
պայտաններով:

Պատասխանատու խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր Փոքր Դ ԵԱԶԱՐԷթԱՆ Ալեքսանդրիա